7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ. դեկտեմբերի 14-ից մինչև 2012թ. մայիսի 14-ը
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում է՝ 39.993.400,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Մշակույթի նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N Մ- 052Ա
քաղ. երևան

**«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴԻՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱ-
ՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N 3.8-1/226-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N 110-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունվարի 13-ի N ՀՔ/22/110-12, Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունվարի 17-ի N03/07-1/252-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/183-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 15857090 դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջ սնունդ» ծրագիրը (կցվում է):

2. «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, Ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված

ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության
Հայաստանի մասնաճյուղի համաձայնագրով Ի. Սաղոյանի կողմից



Հասցե: Երևան, Կոմիտասի պող. 111
Հեռ. 010 519077
Էլ. փոստ: info@armenian.savethechildren.org

«ԱՌՈՂՋ ՄՆՈՒՆՆ» ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Խթանել առողջ սննդի օգտագործումը տարրական դպրոցի երեխաների շրջանում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից:
3	Բարեգործը	Միավորված ազգերի կազմակերպության պարենի համաշխարհային ծրագիր, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան 0010, Պետրոս Աղայան 14
4	Ծրագրի կատարողը	«Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» / ՄՉ կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Ք. Երևան, Ազաթանգեղոսի շա, ՀՎՀՀ 01519077
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Երևան և Արմավիր Բնագավառը՝ առողջապահական:
6	Ծրագրի բյուջեն («ՄԱԿ-ի»-ի պարենի համաշխարհային ծրագրի մասով)	15,857,090 դրամ (կամ 42,857 ԱՄՆ դոլար՝ հաշված 370 փոխարժեքով)
7	Բարեգործությունը ստացողը	ՀՀ հանրակրթական տարրական դպրոցի աշակերտները/ 1-4 դասարաններ:

8	Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 31-ը:																																			
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի հիմնական նպատակն է հասնելու համար նախատեսվում է. - Մշակել առողջ սննդի վերաբերյալ կրթական նյութ, ներառյալ “Առողջ սնունդ” ուսուցչի ձեռնարկը և “Առողջ սնունդ” ուսուցողական նյութերը տարրական դասարանների աշակերտների համար, - իրականացնել մշակված նյութի փորձարկման համար ընտրված դպրոցների ուսուցիչների վերապատրաստում, - ընտրված դպրոցներում իրականացնել մշակված նյութի փորձարկումը, - ներկայացնել մշակված նյութը ՀՀ Կրթության և գիտության և առողջապահության նախարարություններ՝ վերանայման և հաստատման, - տպագրել մշակված և հաստատված ձեռնարկները: Ընդամենը ըստ եռամսյակների պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը. <table><tr><th>Եռամսյակ</th><th>Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (հազ. դրամ)</th><th>Կրթական նյութերի մշակման ծախսեր (հազ. դրամ)</th><th>Վերապատրաստման ծախսեր (հազ. դրամ)</th><th>Տպագրական ծախսեր (հազ. դրամ)</th><th>Գործողական ծախսեր (հազ. դրամ)</th><th>Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)</th></tr><tr><td>IV - 2011</td><td>257.15</td><td></td><td></td><td></td><td>55.50</td><td>312.65</td></tr><tr><td>I - 2012</td><td>771.45</td><td>1,983.20</td><td>577.20</td><td></td><td>166.50</td><td>3,498.35</td></tr><tr><td>II - 2012</td><td>514.30</td><td></td><td></td><td>9,820.91</td><td>111.00</td><td>10,446.21</td></tr><tr><td>Ընդամենը</td><td>1,542.90</td><td>1,983.20</td><td>577.20</td><td>9,820.91</td><td>333.00</td><td>14,257.21</td></tr></table>	Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (հազ. դրամ)	Կրթական նյութերի մշակման ծախսեր (հազ. դրամ)	Վերապատրաստման ծախսեր (հազ. դրամ)	Տպագրական ծախսեր (հազ. դրամ)	Գործողական ծախսեր (հազ. դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)	IV - 2011	257.15				55.50	312.65	I - 2012	771.45	1,983.20	577.20		166.50	3,498.35	II - 2012	514.30			9,820.91	111.00	10,446.21	Ընդամենը	1,542.90	1,983.20	577.20	9,820.91	333.00	14,257.21
Եռամսյակ	Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (հազ. դրամ)	Կրթական նյութերի մշակման ծախսեր (հազ. դրամ)	Վերապատրաստման ծախսեր (հազ. դրամ)	Տպագրական ծախսեր (հազ. դրամ)	Գործողական ծախսեր (հազ. դրամ)	Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ)																															
IV - 2011	257.15				55.50	312.65																															
I - 2012	771.45	1,983.20	577.20		166.50	3,498.35																															
II - 2012	514.30			9,820.91	111.00	10,446.21																															
Ընդամենը	1,542.90	1,983.20	577.20	9,820.91	333.00	14,257.21																															
10	Չեղարկվող (ներմուծվող) պարամետրների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և	- Ծրագրում ընդգրկված ՄՉ-ի աշխատակազմի աշխատավարձեր - 1,542,900 դր. - Կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում - 1,983,200 դր. - Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 577,200 դր. - Տպագրական ծառայությունների մատուցում - 9,820,910 դր.																																			

	Նախատեսվող գինը	Գործողական և տրանսպորտային ծախսեր (գործողականներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում) - 333,000 դր.
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	- Սպասարկող աշխատակազմի աշխատավարձեր - 1,205,830 դր. - Օպերացիոն ծախսեր - 394,050 դր., ներառում է գրասենյակի վարձը, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում ՄՉ-ն կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և ընտրված դպրոցների կողմից և ընդգրկվում է հետևյալ գործողությունները. - Ֆինանսական մոնիթորինգ; - Ադմինիստրատիվ վերահսկողություն; - Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ - 053-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/282-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13 -ի N ԱԱ/3-4/184-12 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011» ծրագրի մասին» N Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «2011թ. դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2012թ. դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543148) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-23/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երաժշտական տեսահոլովակի պատրաստում՝ 20275200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՇՈՈՒ ԼԵՆԴ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513896) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-22/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 4 րոպե տևողությամբ երգի ստեղծում՝ 7027200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ- 054-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-623-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 16 -ի N 3/3.8-1/227-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/188-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի և նեֆրոլոգիայի բաժանմունքի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-623-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «2011թ. դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2012թ. մարտի 30-ը» բառերով.

2) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետերում «47268899 դրամ» բառերը փոխարինել «53086713 դրամ» բառերով.

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «46988899 դրամ» բառերը փոխարինել «52806713 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ- 055 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-897-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/300-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 19 -ի N ԱԱ/3-4/439-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Քասախի սոցիալական տան առանձին կառուցվածքների ուժեղացում և հատակների վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-897-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2011 թվականի դեկտեմբերի վերջը» բառերը փոխարինել «2012 թվականի փետրվարի վերջը» բառերով.

2) որոշման 1-ին կետում, 2-րդ կետի 2-րդ պարբերությունում և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «26898916 դրամ» բառերը փոխարինել «34549351 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ- 056-Ա

քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 9-ի N 3/3.8-1/90185-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N ԱԱ/3-4/9854-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ** է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հատուկ էլեկտրամոնտաժ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00407927) 2011 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար մալուխագծերի տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 14704300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ- 057-Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության քարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 3/3.8-2/89711-11, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N ՖԲ/ԱՆՄ-5/10284-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N ԱԱ/3-6/9646-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» քարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (186 տեղ, 3160 կգ ընդհանուր քաշով, 82.500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5950 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության քարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» քարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-896-Ա որոշմամբ (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Երկրորդում, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՍՏԱՅՎԵԼԻԲ ԲԵՌԻ ԲԱԾՄԱՆ ՅՈՒՅԱԿ

(Container No MEDU 1379458)

9/17.8

Հ/Հ	Ստացող կազմա- կերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, գույգ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
1.	Տիրամայր Հայաստանի Կենտրոն-Գյումրի (մոտ 350 շահառու)	31	2 արկղ (50 գույգ)	կոշիկ	12	600
			1 արկղ (300մ)	անկողնային կտոր բամբակյա	3.3	1000
			1 արկղ (5 հատ)	խոհանոցային պարագա այլումինից թավա	60	300
			10 արկղ (100 հատ)	բաճկոն	63.6	6363
			5 արկղ (175 հատ)	տաբատ	12.2	2128
			5 արկղ (160 հատ)	սվիտր	11.8	1892
			2 արկղ (240 հատ)	մայկա	4.3	1040
			2 արկղ (60 հատ)	կիսաշրջագցեստ	11.7	704
			1 արկղ (200) գույգ	գուլպա	2.8	562.5
			2 արկղ (60 հատ)	պայուսակ	15.3	920
2.	Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 3000 շահառու)	127	37 արկղ (1295 հատ)	տաբատ	12.2	15744
			40 արկղ (1280 հատ)	սվիտր	11.8	15137
			16 արկղ (1920 հատ)	մայկա	4.3	8320
			23 արկղ (690 հատ)	կիսաշրջագցեստ	11.7	8092
			6 արկղ (1200) գույգ	գուլպա	2.8	3375
			3 արկղ (90 հատ)	պայուսակ	15.3	1380
			2 արկղ (50 գույգ)	կոշիկ	12	600
			12 արկղ (120 հատ)	բաճկոն	63.6	7637
3.	Գյումրու կարիքավոր ընտանիքներ (մոտ 500 շահառու)	28	5 արկղ (175 հատ)	տաբատ	12.2	2128
			6 արկղ (192 հատ)	սվիտր	11.8	2271
			2 արկղ (240 հատ)	մայկա	4.3	1040
			2 արկղ (60 հատ)	կիսաշրջագցեստ	11.7	704
			1 արկղ (200) գույգ	գուլպա	2.8	562.5

Այս բեռի ընդհանուր քաշն է 3160 (երեք հազար հարյուր վաթսույն) կգ, արժեքը՝ \$ 82.600.00 (ութանասուններկու հազար վեց հարյուր ԱՄՆ դոլար), ճանապարհածախսը կազմում է \$ 5,950.00 (հինգ հազար ինն հարյուր հիսուն ԱՄՆ դոլար):





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N Մ- 058 -Ա
քաղ. երևան

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 20-ի N 3/3.8-2/506-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N ՖԲ/ԱՆՄ-5/161-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-6/179-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի միացյալ հայկական ֆոնդի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված թխվածքաբլիթների (756 տեղ, 6920 կգ ընդհանուր քաշով, 66052 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 6500 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՏՃԿՍ 3978751 բեռնարկվում եղած բեռի բաշխման ցանկ

	Ստացող կազմակերպություն	Քանակ /արկ/	Քաշ /կգ/
1	ՀՕՖ-ի Վանաձորի տարեցների տուն հիմնադրամ	15	137.31
2	ՀՕՖ-ի Երեվանի աջակցության կենտրոն հիմնադրամ	15	137.31
3	ՀՕՖ-ի Բարեգործական ճաշարաններ	80	732.32
4	Գավառի թիվ 1 հաստակ դպրոց ՊՈԱԿ	8	73.23
5	Վանաձորի մանկատուն ՊՈԱԿ	8	73.23
6	Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ	11	100.69
7	Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ	20	183.08
8	Ս. Իզմիրյանի անվան մանկատուն ՊՈԱԿ	9	82.39
9	Չիմաղի գյուղի մանկապարտեզ ՊՈԱԿ	2	18.31
10	Այգեվար գյուղի մանկապարտեզ ՊՈԱԿ	2	18.31
11	Զանգակատուն համայնքի մանկապարտեզ ՊՈԱԿ	3	27.46

20.1/7.5

12	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց	8	73.23
13	Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ	9	82.39
14	Թիվ 1 տուն ինտերնատ ՊՈԱԿ	9	82.39
15	Նորքի տուն ինտերնատ ՊՈԱԿ	7	64.08
16	Գյումրու տուն ինտերնատ ՊՈԱԿ	15	137.31
17	Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ ՊՈԱԿ	25	228.85
18	ՀՀ պատերազմի, աշխատանքի զինված ուժերի և իրավապահ մարմինների վետերանների միավորում	20	183.08
19	Գյումրու «Թռչունյան տուն» մանկատուն	12	109.85
20	Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ	8	73.23
21	Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ	17	155.62
22	Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց ՊՈԱԿ	9	82.39
23	Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 15 հատուկ դպրոց ՊՈԱԿ	17	155.62

4.1/7.5

24	Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոց ՊՈԱԿ	7	64.08
25	Երևանի թիվ 12 հատուկ դպրոց ՊՈԱԿ	8	73.23
26	Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ դպրոց ՊՈԱԿ	16	146.46
27	Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց ՊՈԱԿ	9	82.39
28	Գյումրու Ֆ. Նանսենի անվան խնամքի և պաշտպանության գիշերօթիկ թիվ 2 հաստատություն ՊՈԱԿ	9	82.39
29	Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Հրաչ և Սյուզան Թուֆայան Հայորդյաց Տուն	378	3460.21

Արկղ Բաշ Գրամարդ
Ընդամենը 756 6920 66 052 դոլլար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N Մ - 059 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2012» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 20-ի N 3/3.8-1/467-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 19-ի N 175-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 16-ի N ԱԱ/3-4/248-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 150000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հեռատամարթոն-2012» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գգալի նշանակություն՝

1) «ԱՐՏ ԹԻՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01559903) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-25/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վավերագրական կինոնկարի սցենարի ստեղծում՝ 2995200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513906) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-21/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վավերագրական կինոնկարի նկարահանման աշխատանքների իրականացում՝ 33945600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ՄՐԱՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01559911) 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված՝ N Ծ-24/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է


վավերագրական կինոնկարի հետարտադրական աշխատանքների իրականացում՝ 12556800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Համախառն» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն


Արմինա Դարբինյան

«12» հունվարի 2012թ.

«Հոբելյանական Հեռուստամարաթոն – 2012»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Նախապատրաստել հիմնադրամի 20-ամյակի միջոցառումները և բարեգործական դրամահավաքին մվիրված «Հեռուստամարաթոն-2012»-ի պատշաճ անցկացումը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ և ԼՂՀ, սոցիալ-տնտեսական բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 150.000.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ և ԼՂՀ ազգաբնակչությունը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը մախատեսվում է իրականացնել 2011թ հունվարի 12-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն մախատեսվում
9.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և մախատեսվող գինը	«ԱՐՏ ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀՀ-ի 20-ամյա գործունեության վերաբերյալ վավերագրական կինոնկարի սցենարի ստեղծում՝ 2.995.200,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից մինչև 30 րոպե տևողությամբ վավերագրական կինոնկարի նկարահանում՝ 33.945.600,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:

		«ՄՈԱՇ» ՍՊԸ-ի կողմից վավերագրական կինոնկարի հետարտադրական աշխատանքների /մոնտաժային, վիզուալ էֆեկտների, գունազատման, ձայնային մոնտաժի, մաստերինգի և երաժշտության օգտագործման իրավունքների ձեռքբերման և օգտագործման/ իրականացում՝ 12.556.800,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: Նախատեսվում է մաս տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնի և 20-ամյակին մվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 100.502.400,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն մախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն համապատասխան մարզպետարանների հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

Մ. Է. Դ.
2/1/12



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N *060*-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 9-ի N 3/3.8-1/90184-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N ԱԱ/3-4/9851-12 գրությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշման մեջ «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամ» բառերը փոխարինել «Հայաստանի մանուկների հիմնադրամ» բառերով:

2. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի օգոստոսի 27-ին կնքված N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 480000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ N 115080665/S4004012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1800000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N 55099 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի

հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ ամսեկան 200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) քաղաքացի Նոնա Ղազարյանի հետ (անձնագիր սերիա AH 0377601, տրված 15.05.2007., 040-ից) 2010 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը անշարժ գույքի վարձակալում՝ 16740000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Նորդ Ավենյու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555764) 2010 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կոմունալ ծառայությունների մատուցում՝ 1920000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 04102/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 780000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Ալբան Քոմունիքեյշնս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04561774) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ N 000110288 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային ծառայությունների մատուցում՝ 204000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

8) «Աթար Դիվայր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02700232) 2010 թվականի հունվարի 11-ին կնքված պայմանագրում (2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տնտեսական ապրանքների և սննդամթերքի մատակարարում՝ 2400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ - 061-Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-400-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 13-ի N 3/3.8-1/146-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/150-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-400-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի փետրվարի 23-ի կնքված N 317008 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 7625000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայրուագագարդ» ՓԲԸ-ի Աբովյանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված N 06112075897 պայմանագրում նշված գործարքն, որով

նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 6353635 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայքրոնոլոյոյոյի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 440000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 686 դիմումով, 2007 թվականի մարտի 29-ին կնքված՝ N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 4-ին կնքված՝ N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 2208000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N Մ - 062-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-39-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 13-ի N 3/3.8-1/147-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/186-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-400-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ազատել» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված N 015817 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 6300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայրուագագարդ» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 8349 պայմանագրում նշված գործարքն, որով

նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 6000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 480000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված՝ N 114198702 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 261175 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 114198702-S7200163 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 110000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ N 10541396 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 498700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հունվարի 2012 թվականի N Մ - 063- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-1/249-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/1 47 -12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-401-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արարկիր» մասնաճյուղի հետ 2003 թվականի հունվարի 24-ին կնքված N 0084242 և «Էրեբունի» մասնաճյուղի հետ 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 276397 (ՀՎՀՀ՝ 01520882) պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1212000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայմուսագաղար» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Կ.011.04.06.0922, 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Կ.012.04.06.0922 և 2007 թվականի ապրիլի 23-ին կնքված N Կ.015.04.07.0922 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 2062823 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Զուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2012 թվականի հունվարի

1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 432000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2005 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 010447655 և 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 010634092 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 2076000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հունիսի 8-ին կնքված N 113439520 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 505000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2012 թվականի N Մ - 064
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N 3/3.8-2/89966-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/9806 -11 եզրակացությունները, **ո ր ո - 2 ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված իրեն պատկանող հին թղթադրամների, ոսկե և արծաթե հուշամեդալների (1 տեղ, 25.4 կգ ընդհանուր քաշով, 61850 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 546.72 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հունվարի 2012 թվականի N Մ- 065 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Մատենադարան» հիմնադրամի տնօրենի
2012թվականի հունվարի 12-ի N 03 գրությունը, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան»
հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին
ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա
տարածքների վերակառուցում» N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում
«31.12.2011թ.» բառերը փոխարինել «01.03.2012թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 հունվարի 2012 թվականի N Մ - 066 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 16-ի N 3/3.8-1/244-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 13-ի N ԱԱ/3-4/182-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր համայնքներում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» N Մ-403-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1064-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2011 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 113665644 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 110000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Առյժն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հունվարի 2012 թվականի N Մ-067-Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունվարի 20-ի նիստին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-1/15279-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 19-ի N ԱԱ/3-4/407-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2012 թվականի հունվարի 10-ին կնքված N 01/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար գրանիտե սալիկների մատակարարում՝ 3969000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «ՇԵՆ Կոնցեռն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201344) 2012 թվականի հունվարի 17-ին կնքված N 02/Մ

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար ներկանյութերի մատակարարում՝ 10346559 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Պատ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201962) 2012 թվականի հունվարի 17-ին կնքված N 03/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար պեմզաբլոկի մատակարարում՝ 780000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ